*Պարոն/ Ս. Աղինյանին*

*Խնդրում եմ նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար*

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մեսրոպյանին*

*Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն*

*Մ.Մեսրոպյան*

*« 11 » մարտ 2026թ.*

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Մասնակիցների անուն, ազգանուն՝** Սերգեյ Աղինյան:

**2.Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ:

**3.Գործուղման վայրը և ժամկետները՝** 2026 թվականի մարտի 4-ին Հունգարիայի Բուդապեշտ քաղաք:

**4.Հրավիրող կողմը՝** Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիան (ERRA):

**5.Գործուղման նպատակը՝** Մասնակցել 2026 թվականի մարտի 4-ին Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում կայանալիք Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի /ERRA/ նախագահության հանդիպմանը

**6.Քննարկված թեմաները՝** ERRA նախագահության հանդիպման ընթացքում քննարկվել են ERRA ֆինանսական կարգավիճակը, 2026 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները, 2026-2027 թվականներին կայանալիք տարեկան կոնֆերանցների կազմակերպման առանձնահատկությունները և այլն:

Մասնավորապես՝ ներկայացվել է ERRA անդամ կարգավորող մարմինների կողմից կատարվող անդամակցության վճարների վերաբերյալ տեղեկատվություն, քննարկվել են 2026 թվականի ապրիլի 27–28-ին կայանալիք տարեկան կոնֆերանսի օրակարգը և դրա շրջանակում նախատեսվող կոմիտեների հանդիպումների օրակարգերում ընդգրկված

թեմաները: Քննարկվել են նաև հաջորդ տարեկան կոնֆերանսների օրակարգերում ներառվելիք հարցերը, կազմակերպման հնարավոր վայրերը և ժամկետները:

**7.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝** Հանդիպման արդյունքներից ելնելով՝ առաջարկվում է շարունակել ակտիվ մասնակցությունը Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) նախագահության հանդիպումներին՝ ERRA միջոցառումների պլանավորման գործընթացում ներգրավված լինելու, հանձնաժողովի համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների օրակարգում ներառման, դրանց վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրության և հետագայում Հայաստանում լավագույն փորձի ներդրման նպատակահարմարության գնահատման նպատակով:

*Գործուղվող* ---------- ***Ս.Աղինյան***

*(ստորագրությունը, ամսաթիվը)*

11.03.2026թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 038-ՀՆ, 03.02.2026թ

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Բուդապեշտ /Հունգարիա/**

5. Գործուղման ժամկետները **03.03.2026-05.03.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Սերգեյ Աղինյան | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս) | | - |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 163,641 | 163.641 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (դոլար) | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | |
| | Օրերի քանակը | | |
| | Ընդամենը (դրամ) | | - |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (դոլար) | 84 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 31,774 | |
| | Օրերի քանակը | 3 | |
| | Ընդամենը (դրամ) | 95,322 | 95.322 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | - |
| | Այլ ծախսեր (*նկարագրել*) | | |
| **Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)** | | 258.963 | 258.963 |

**Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,**

*(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)*

Ամսաթիվ **06.03.2026թ.**